



ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉԻ ՏՕՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Կիրակի, 13 Մայիս 1990, առաւօտեան ժամը 9-ին հանդիսաւոր Ս. պատարագ մատուցուեցաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ ԵՐԵՒՄԱՆ ԽԱՉ-ի Տօնին առթիւ: Պատարագին կը նախագահէր Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը՝ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, իսկ օրուայ պատարագիչն էր Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէն՝ Հոգշ. Տ. Անուշաւան, Վրդ. Ջոջանեան: Կոմիտասեան պատարագը, երգեցողութեամբ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի աշակերտներուն, կը ղեկավարէր դպրապետ Պրն. Սահակ Գալայճեան, ստրկութեան տառապանքներէն Կորովի վարդապետներէն՝ Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան, որ ինչպէս միշտ այս տօնին ալ իր հնչեղ ձայնով կատարեց պատարագի մեներգները:

Իր իմաստալից քարոզին մէջ պատարագիչ հայր սուրբը պատմականը ըրաւ Խաչի Երեւման դէպքին, որ կատարուած էր 351 թուին Մայիսի 7-ին, Երուսաղէմի մէջ, Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց Լեռ երկարող լուսաւոր խաչի մը երեւման հրաշագան դէպքի յիշատակումով: Սոյն խիստ շահեկան քարոզին ամփոփումը հետեւեալն էր, բնաբան ունենալով Պօղոս Առաքեալի Գալատացոց ուղղութեամբ թողութեն 6-րդ գլուխ 14—15 համար: «Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը, որ անով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի: Ինչու որ Քրիստոս Յիսուսով ոչ փախուցիւնք բան մըն է, ոչ ալ անթլփախութիւնք: Բապա Աոր ստեղծուած ըլլալն

է բանը»: Պօղոս Առաքեալ այս թողութին մէջ կը պարծենայ միայն Քրիստոսի խաչով: Խաչը եղաւ իր միակ հպարտութիւնը, փրկութեան ապաւէնը եւ միախառնութիւնը: Ան չի հպարտանար իմաստասէրներու գիտութեամբ, գիտնականներու նուաճումներով, մարդկային իմաստութեամբ՝ որ տղկար է եւ սխալական, այլ միայն Քրիստոսի խաչով: Խաչը եղաւ մեր փրկութեան խորհրդանիշը, քանի որ ան խաչին վրայ բաւեց մեր մեղքերը: Խաչով մարդը փրկուեցաւ մեղքի կապանքներէն եւ անոր առջեւ բացուեցաւ ազատագրութեան ուղին: Դարդկութիւնը ինկած էր մեղքի անդունդներուն մէջ: Դարդը իր սեփական ճիշդերով չէր կրնար ազատուիլ մեղքի, չարիքի եւ խաւարի ճիրաններէն: Ազատարար մը պէտք էր, փրկիչ մը, մեր Տէր Յիսուս Քրիստոսը, որ իր լուսապսակ կեանքով եւ իր աստուածային քարոզութեամբ մեզ ազատագրեց մեղքի կապանքներէն: Պատմութեան ընթացքին եկան ենթադրեալ փրկիչներ, բայց անոնք ձախողեցան, որովհետեւ չի կրցան մարդկային հոգիի խորերուն մէջ արմատներ նետել: Այսօր ալ կան ինքնակոչ փրկիչներ, ազատարարներ, սակայն մեր Տէրը կը մնայ իրական եւ ճշմարիտ փրկիչը, իր անփոխարինելի պատգամով: Քրիստոսի զոհողութիւնը խաչին վրայ կը մղէ մեզի, քրիստոնէականերու, արթննալու մեր հոգեւոր թմբիւնէն, ընդգրկելու մեր Տիրոջ զոհաբերութեան եւ սիրոյ ոգին, որ հաստատուն գրաւականն է մեր մէջ քրիստոնէական արժեւորումին: Եւրկայ դարուն, մարդիկ հեռացած են խաչով պաշտմանս որ զոհաբերութեան եւ սիրոյ ո-

գիւն եւ որդեգրած են ճիթապաշտութեան, նաասիրութեան եւ փառամոլութեան ուղին: Խաչիւն տեսչի սեպ պիտի մղէ: Քրիստոսէութեան փոխակերպիչ կանչերուն, խաչելու մեր մէջէն հին եսը՝ իր յոռի ձգտումներով եւ իրացնելու Քրիստոսի վերանորոգիչ ուժը: Մարդկութիւնը ներկայ դարուն արձանագրած է հսկայական յառաջդիմութիւններ, գիտական զանազան մարզերուն մէջ, բայց անոնք բաւարար են մարդս երջանկացնելու, ոչ, մարդու հոգեկան աշխարհին է, սէրն է, արդարութիւնն է, խաղաղութիւնն է, եղբայրասիրութիւնն է, որ մարդու երջանկութեան իրական եւ տեական աղբիւրը կրնան դառնալ: Խաչով խորհրդանշուած տառապանքը եղաւ մեծ իրագործումներու առաջնորդող ճամբան, ականաւոր

անձնատրոթիւններ անցան իրենց երազներու եւ գաղափարներու իրագործման համար, ճիգի, զոհողութեան եւ տառապանքի ուղիէն: Քրիստոսի խաչը եղաւ իրենց գերազոյն առաջնորդը եւ ապաւէնը: Խաչը՝ որ հեթանոսական շրջանին, անարգութեան եւ մահապատիժի գործիքն էր, քրիստոնէութեամբ դարձաւ փրկութեան լաստի, պայմանաւ որ անոր վրայ մեծագոյն զոհաբերութիւնը կատարող Աստուածորդիին նման, մենք ալ չի խուսափինք քրիստոնէական մեր պարտականութիւններէն, ուրիշ խօսքով մեր խաչը կրելէն, անտրտունջ եւ գիտակից համակերպութեամբ: Այս է խաչի բոլոր տօներուն պատգամը իրաքանչիւր քրիստոնէայի:

ԹՂԹԱԿԻՑ

